

խակ թշնամի Ռուսիան՝ բերանարաց։ Արեւելքի մէջ քաղաքակրթութեան կեղծ յաղթանակի այս Դէպքը տեղի կ'ունենար 1856ին, Սեփաստաբօլի առումին յաջորդ օրը։

Ահա՛ այսքան գեղեցկօրէն ու պատեհօրէն ներկայացող առիթէն է որ մեր ազգին յաւէտ պաշտօնեալ բարերարները չ'ուշացան օգտուելու, ու թանգրիւնարին կցեցին Սահմանադրութիւնը կամ Ազգ. կանոնադրութիւնը, այն է, իշխուածին իշխանութիւնը՝ իշխեցողին իշխանութեանը դէմ։ Սակայն Դուռը, միշտ հետեւող իր խոստմնառատ ու գրծող քաղաքականութեան, ցցեց Սահմանադրութեան դէմ թանգրիւնարին ուրուականը։ Մայրաքաղաքէն սկսեալ, բոլոր նահանգներուն, գաւառներուն ու գաւառակներուն մէջ կարգացուեցաւ հրովարտակը, նոր Ոսկեգարի մը ծնունդըն աւետելով Կայսրութեան բոլոր բնակիչներուն. հոգ չէ՛ թէ Հայաստանի խորերը, Դուռը սրէր իր եւրասիական ու խորանարդէր բարբարոս նախնիները թալանին ու ջարդին՝ հեզուկ ու անմիտս գիւղացիներուն վրայ. որո՞ն հոգ թէ Տիւրքիներն ալ Սուրիոյ մէջ գործէին աներեւակայելի դազանութիւններ Լիբանանի ու Դամասկոսի քրիստոնէից վրայ. . . :

Թանգրիւնարը կը մնար ուրեմն մեռած տառ. Թուրքիան փրկող բարեկամ Տէրութիւնները մէկիկ մէկիկ կը քաշուին տեղերնին, — անշուշտ յարաբերական շահերնին ամուր հիմերու վրայ դնելէ ետք — դարձեալ Բայան կը մնայ միս մինակ, դատապարտուած գերի, նախասահմանուած զոհ, իր կատարած ահրոջ ոտքերուն տակ, գողգալով. 'ի վերջոյ, ա'յնքան գոռացող ու դղրդացնող, ա'յնքան սրտեր թունդ հանող հոշակաւոր թանգրիւնարին դիակը՝ լայնատարած կը պառկէր Կայսրութեան միացող աւերակուտին վրայ. . . :

Սակայն ազգային ինքնավարութեան տենդէն բռնուած հայ ըղբիւնները քուն չ'ունէին, կը հսկէին, կը գործէին,

որ դարերու կարծրութեամբը զրահուած ժայռերը կը մաշէ. . . : Տեղի՛ տալ, կարելի չ'էր. ուստի, ճիգ մ'ալ ըրին, յանդուգն փորձ մը, ուղղակի Դուռը դիմեցին եւ պահանջեցին Սահմանադրութեան վաւերացումը։

Բանակներ վճացնող ահուկի պատերազմին դեռ ա'յնքան թարմ յիշատակէն, կամ անոր յեղակարծ կրկնումին կարելիութեանը վախէն թէ Հայաստանի ներսերը գործուող ու մինչև Վոսիոր արձագանգ գտնող ոճիրներէն ու այդ ոճիրներու զոհերուն ազազակներէն դոյացած խղիւղութէն ներշնչուած կամ բռնադատուած, Դուռը տեղի տուա՛ւ. Մէճիտ լսեց վերջապէս հայ ժողովուրդին ձայնն ու Սահմանադրութիւնն ընդունուեցաւ 1860ին։ Հայութեան յաղթանակի դարագլուխն եղաւ անի, ու տօնուեցաւ տօներու շքեղագունին փայլովն ու խանդավառութեամբը։ Շուտով կազմուեցան մարմինները, ժողովուրդին հաւաքական կամքին ներկայացուցիչ ժողովները. ինչպէ՛ս ամիրայութիւնը. բռնապետութեան փլատակներուն տակէն դեռ կը լսուէին մուշտակաւոր ու տիտղոսաւոր ջոջերուն ու ամիրաներուն ողորմուկ հռնախնները, հեծկտանքներն ու հառաչանքի յետի՛ն վանկերը. . . : Շունչ մը, լիաթօք շունչ մ'առաւ ազգը. գիտակցութիւնը յաջորդեց սարուկ միամտութեան ու նուաստ համակերպութեան, ու, — հրաշալի՛ հակասութիւն — բացարձակ բռնակալի մը բերնովը ու հրովարտակովը հաստատուեցաւ ժողովուրդին գերիշխանութիւնը։ Սահմանադրական առաջին Պատրիարքն անցաւ խելայեղ ամբօխի մը խնդամուկ ծափերուն ու կեցցէներու սրտին մէջէն, ելաւ Խորանը, Սեղանին առջիւ արտասանեց պաշտօնական երգումը հաւատարմութեան դէպ 'ի Սահմանադրութիւն, դէպ 'ի հայ Ազգն ու դէպ 'ի հայ Ազգը հայրաբար կառավարող Տէրութիւնը. այնուհետեւ է որ կարող եղաւ բարձրանալ այն գահը, որուն վրայ

սրբաբայք Պատրիկներ, ամիրաներու
երկաթի գաւազանովը կառավարելու
ժողովուրդն ու անոր արիւնը ծծելու
համար. . . :

Եւ ահա՛ Սուրիայէն կը հասնի հա-
զարաւոր քրիստոնեաներու շարքի
գոյժը. Դուռը կը շլմորի, Եւրոպան,
Նաբոլէոնի Ծրանսան դուխը, կը մի-
ջամտէ ու թէև քիչ մ'ուշ, առաջը
կ'առնու արեան հեղեղին որ պիտի առ-
նէր տանէր, բնաջինջ ընէր բովանդակ
Սուրիոյ քրիստոնեայ տարրը: Միջա-
մտութիւնը սակայն, օտար ու արտա-
քին, կը կատղեցնէ այս անգամ նոր
Փատիշահը, որ յաջորդած էր իր թո-
քախաւոր եղբօրը, իր հաւերէն ժա-
ռանգելով արջին ուժն ու Մոնկոլի մո-
լեռանդութիւնը, որ իր բոլոր թափով
ինկաւ Հայո՛ւն վրայ. ա՛յնքան զոհա-
բերութիւններով ստացուած Սահմա-
նադրութիւնը շուրս ինկաւ նորէն, ետ
առնուեցաւ. ու այսպէս, Սուրիական
արիւնոտ տրամին հակահարուածը
մե՛նք կրեցինք:

Սակայն այդ սարսափի խորոցը
չառ կարճ եղաւ բարեբազօրէն, շար-
դուած Սուրիացիներուն արեան գետին
մէջէն գլուխը վեր հանեց Լիբանանը,
փոքրաթիւ, բայց ազատագրուած Մա-
րօնիներու կէս-անկախ վարչութեան
մը շուքին տակ:

Լիբանանի առանձնաշնորհումներէն
քաջալերուած՝ Սահմանադրութեան
հեղինակները փորձ մ'ալ ըրին վերստա-
նալու համար յափշտակուածը. Ապտ-
իւլ-Ազիզ, մասնաւոր հրովարտակով
մը վերջապէս վաւերացուց Սահմանա-
դրութիւնը, որուն հակառակած էր
Գէորգ Պատրիարքն ու պաշտօնանկ ե-
ղած. ասոր յաջորդը Սարգիս՝ առաջին
Սահմանադրական Պատրիարքն եղաւ:

Երկար է թուել հոս այլազան շար-
ժումները, որ պատրաստեցին ազգա-
յին զարգացումը Սահմանադրական
վարչութեան ստեղծումէն ՚ի վեր. պիտի
բաւականանք անցողակի յիշելով Խրիմ-
եանի ու Վարժապետեանի շրջանները:

70ական թուականներուն Երեսփ. Ժո-
ղովին ատենագրութիւնները, ազգին
կենսական պէտքերուն համար ո՛չ այն-
չափ բաւարար դտնելով Սահմանա-
դրութիւնը, անոր վերաբնութիւնը
պահանջեց ՚ի նպաստ ազգ. ու կրօն.
չահերուն ու իրաւունքներուն. ու,
տեսնելով որ իր առաջարկը չ'պիտի
գործադրուէր, Ազգ. Պատրիարքարարի
պատկառելի պարտքը ջնջելէ յետոյ
հրաժարեցաւ:

Իսկ Վարժապետեան, աւելի հե-
ռատես ու վարչագէտ, Հայրիկին պա-
հանջկոտութիւնը մէկգլի դրաւ, 2 տա-
րի շարունակ զբաղելով ըսկ Հայաստա-
նի խորերէն տեղացած տխուր տեղեկա-
գիրները կարգաւորելու, եւ ազգին
կրթական ու տնտեսական զարգացման
զարկ մը տալու: Սակայն գաւառներէն
յաջորդաբար հասած աւարի, թալանի,
մասնակի շարքի, առեւանգումի և ու-
րիչ գազանային բռնաբարութեանց շա-
րունակեալ ոճիրներուն դէմ արդար
ու անվերջ բողոքի բլուր մը ձևացնող
Պատրիարքական քազրիտները՝ Դրան
կողմէն կը մնային անլսելի. զմէր էր
խօսքը, ամո՛ւլ էր բողոքը, գործե՛լ
պէտք էր: Ու ճիշդ ու ճիշդ այդ ա-
տեն է որ կը պայթի Ռուսեթրքա-
կան մեծ պատերազմը: Այս աղետա-
բեր պատերազմին ժամանակ Հայաս-
տանի մէջ գործուած անլուր բարբա-
րոսութիւնները տեղը տեղովը, թուա-
կանովը, հեղինակովն ու շարժառիթ-
ներովը պատկերող ընդարձակ յիշա-
տակագիր մը պատրաստելով ներսէս,
ներկայեց Այս Սթեֆանօյի բարձունքը
ռուսական արծուին պարզող Մեծ Դուքս
Նիքօլային ու իր ազգին ազատագրու-
թիւնը պահանջեց: Մնացեալը գիտենք,
Պէրլինէն մինչեւ Սասուն, Սասունէն
մինչև Զեթուն, ու մինչև մեր օրերը,
իր բոլոր քստմնելի մանրամասնութիւն-
ներովը. . . :

Արդ, ա՛յնչափ ազնիւ երկունքով
ծնած, ա՛յնչափ արիւն քրտինքով
սնած, ա՛յնչափ անթիւ զոհերով սրբա-


ուպանքներու մէջէ մազապուր՝ մեզի կտակուած Ազգ. Սահմանադրութիւնն է որ կ'ուզուի հոս կոխտեղ, նախատեղ ու խաչ հանել: Ու այս ոճրագործութեան փորձը կ'ըլլայ ողորմելի թշուղներու կողմէ, որոնք այսօր մեր ազգը պիտի ներկայացնէին:

Սակայն ատոնք, նոր Դարուն շատ ուշ հասնող ամիրայիկները. չե՞ն խորհր թէ Սահմանադրութիւնն այն խրթա՛նն է որուն դէմ աքացել չ'ըլլար. ի՞նչ տեսակ խմորէ շինուած են ատոնք, այդ նոր քոնաւորիկները, որ կ'երազեն թէ՛ անպատիժ պիտի կրնան շարունակել իրենց գործը քանդումի, աւերումի, ի՞նչ. այդ տիտղոսաւորները, իրենց այսպէս կամ այնպէս տիրացած բացառիկ դիրքէն ու նիւթական ուժէն արքի՞ն ու փքոցուռոյց, ժողովուրդը զանցառելի ու խոտելի քանակ մը կը կարծեն. չե՞ն կրնար պահ մ'ամփոփել իրենց գիտակցութիւնը — եթէ գէթ հիւլէ մ'ունին այդ բարի բանէն — և ըմբռնել չարիքը, զոր իրենք կը պատրաստեն իրենց յամառ տգիտութեամբ եւ նոյնքան ծաղրելի որքան արգահատելի ապիկարութեամբ ու յաւակնոտութեամբ: Ի՞նչ տխմար ու ապուշ բան. Առաջնորդ կ'ըտրուի, ամիսներով ճամբան կ'սպասուի, կարևոր կամ անկարևոր ծախքերով վերջապէս կը բերուի հոս, օրինաւոր ու արդար ակնկալիքներով ժողովուրդը կը բերկրի, կ'ողևորի, կ'սպասէ ու տակաւին կ'սպասէ... մինչև ե՞րբ:

Ժողովուրդը կ'սպասէ որ իր մատուցած զաւակներուն ապագան ապահովուի, ազգային առողջ ու մաքուր դաստիարակութեան մը կցուելով միջազգային օգտակար կրթութիւն մը, ներկայ դարուս ու միջավայրին անհրաժեշտ պահանջումներուն վրայ ձևուած: Իսկ Վսեմ. վարչութիւնն ու հետևորդ հոգաբարձութիւնը՝ ժողովուրդին աչքին կը փչեն փոշին հարցաքննութեանց, որոնք հակառակ կարգ մը ծոյլ վարձկաններու և ողորմելի պաշտպանեալներու ցոյց տուած տարածամ

փութկոտութեան ու եռանդին, որով մտրակած էին աշակերտները, ժխտական արգիւնք մը տուին. (Թէեւ կը հաւաստուի թէ՛ Գալստեան երկսեռ, մանաւանդ Աղլկանց վարժարանին յառաջդիմական վիճակը շատ կը տարբերի Պօղոսեան(ինէն): Ժողովուրդը կ'սպասէ որ ալ վերջ մը տրուի քմահաճ ու միահեծան դրութեան, (որով կը վարուին քանի մը տարիէ ՚ի վեր մեր ազգային բոլոր գործերը). ու ա՛լ կատարուին ընտրութիւնները. իսկ մեր գերագանցօրէն զգոյշ ու մտմտացող Առաջնորդը կ'սպասէ որ Եւրոպայէն վերադառնան եզրիպտոսի յաւիտենական ազգապետները, Վսեմ. Պօղոս ու Տիգրան բաշաները, առ այժմ այդ վսեմներէն ընտրուած ու վաւերացած քանի մը վսեմիկներու ու ազնուաշուքներու: Բացարձակ ու կամայական տնօրինութիւնները մարտելով լռիկ ու մնջիկ:


Սակայն, ժողովուրդի զգացումներուն ու իղձերուն թարգման, կը կրկնենք. Սահմանադրութիւնը անաբացեղի իսրաւն է, որուն դէմ աքացող ոտքերը կ'արիւնոտին...:



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԱԶԳ. ԵՐԿՍ.

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Փիւնիկի նախընթաց թիւին մէջ յիշած էինք թէ՛ Տնօրէնն ու խմբագիրներէն մին ամեն օր ներկայ գտնուեցան այս հարցաքննութեանց, որոնք տեղի ունեցան սկիզբէն մինչև վերջը, ՚ի բացակայութեան Տեղւոյս Պատ. թագ. Խորհուրդին ու նոյնիսկ Պ. Հոգաբարձուին:

Գեռ մեր կարծիքը չը յայտնած հարցաքննութեանց եղանակին, հասկանալի և արդիւնէի կը վրայ, ըսենք նախ թէ՛ ո՛չ մի հրաւեր, ո՛չ մի ազգերեցաւ այդ մասին տեղեկան միակ ազգ. թերթ Փիւնիկի կամ օտար թեր-

Թերուն մէջ, ո՛չ իսկ — ինչ որ պաշտօնական աններելի սխալ մ'էր — Դահլիճի Արշալոյսին մէջ, որ, այս վերջին օրերս՝ Աղեքսանդրիոյ Թագ. Խորհուրդին պաշտօնական օրկանը, սխալեցայ, Թերթը հռչակուելու հարկ տեսնուած է յիշեալ Խորհուրդին Դաւանագետին կողմէն: Միայն, ՚ի փոխարէն յայտարարութեան այս պակասին, որ կրնայ դործուած ըլլալ ո՛չ մասնաւոր դատումով, Պօղոսեան երկսեռ վարժարանի Հոգաբարձութեան կողմէն հրաւեր ուղղուած էր քաղաքիս քանի մ'անձնաւորութեանց — որոց մեծ մասը բժիշկներ են եւ որոնք շատ բնականօրէն պիտի կրնային պահ մ'ենթադրել թէ՛ իրենք հրաւիրուած ըլլային հիւանդանոցի մը հոգաբարձութեան կողմէն, եթէ հրաւիրագրին մէջ նշանակուած չ'ըլլար հարցաքննութեանց կարգացոյցը (որուն տեղ չ'ենք գիտեր ի՛նչ խորունկ հայկաբանութեամբ մը յայտագիր բառը դրուած էր): Մենք այդ հրաւերը պիտի կոչենք Ապուշ Հրաւեր, որովհետեւ հրաւիրեալները կանչուած էին լոկ իբրև ունկնդիրներ կամ ակնատեսներ, առանց քննիչի պաշտօն մ'ունենալու:

Երբ մեր ազգ. կրթական հարցը ձեռք կ'առնունք, չ'ունինք ուրիշ մտածում, բայց միայն մեր մատաղ սերունդը տեսնել օժտուած զուտ տոհմային, կենսունակ ու տոկուն դաստիարակութեամբ մը, կամ աւելի ճիշդ բառովը, տեսնել մեր ապագայ սերնդին բոլոր անդամները՝ կորովի ու սկզբունքի տէր անհատներ, այսինքն սրտով Հայեր, անյարձակելի ամեն օտարոտի ազգակներէ. տեսնել զայն ո՛չ միայն դաստիարակուած, այլ և քսաներորդ դարու բոլոր պահանջումները լրացնող ու կեանքի պայքարին դէմ մաքառելու աստիճան պատրաստ, ուսումներով ու գրական դիտութիւններով զարգացած Հայ մը. հետեւաբար, ներկայ պարագային, պիտի խնդրէինք աղգային խնդիրներով ստէպ շահագրգռուող մեր ուշիմ ընթերցողներէն, նոյնիսկ

հնօրեայ կամ նորարոյս հակակիրներէ որ, մէկդի ծրարելով ամեն թաղուն դիտումներ, ամեն յետաւոր մտորութիւն, կանխագաւառ ու ամեն ազանգ. պահ մը մոռնալով ամեն խախուտ, ջղուտ ու նողկալի նկատումներ, կէտ առ կէտ ու բառ տու բառ հետեւին այս հակիրճ, բայց խտացած ու աճիտի տեղեկագրին, եթէ կ'ուզեն հասկնալ Պօղոսեան երկ. վարժարանին ներկայ տարուան բարոյական ու մտաւորական կացութեան իսկն ու ստոյգը:

Հարցաքննութիւններն սկսան ներկայ 15ին երկուշաբթի օրը, ինչպէս որ յայտարարած էինք: Առաւօտեան ժամը 9ին Մանկապարտէզը բացաւ գուռկարմիր բանակը մեր երախաներուն, կարգաւ ելան որահր, հրապարակային քննութիւնին անցնելու: Նոյն տանտանները, նոյն ծափիկները, նոյն խաղերը, նոյն թուանշաններն ու նոյն մանր մունր վէպիկները, Ս. Գիրքէն փոխ առնուած կտորներէ կարճ ու փոքրիկ պատմութիւններ, ահաւասիկ այս տարուան հարցաքննութիւնը: Մանկապարտիգպանուհին Օր. Կոկանեան, շատ սէր ու քիչ մ'ալ գորով ցոյց կուտար իր փոքրիկներուն վրայ, որոնք սակայն զգալիօրէն աճած էին ու զարգացած հասակով, և որոնց մատաղ միտքերը, միշտ թարմ ու միշտ առոյգ, սնունդ, աւելի սնունդ կը պահանջէին. ի՛նչ անուշ պիտի հնչէին արդեօք այն օրուան եկողներուն ականջին, արծաթի ձայնիկներով երգուած հայկական հին կամ նոր երգեր, հոն չ'պիտի՞ շաղապատուած ու դրկախառնուած գտնէինք Հայուն անցեալը, ներկան ու ապագան: (1)

Շարունակելի

(1) Կը փափաքեիք Պօղոսեան երկ. սեռ վարժարանին հարցաքննութեանց վրայ զատ Յաւելուած մը հրատարակել. սակայն, Յուրականապէս դժուարութեանց առջեւ պարտաւորուած եմ շարունակելի յօդուածներու վերածել մեր տեսութիւնները:

Մ. Խ.

կը մատուցանէ աւելի քան մեր մեծահարուստ ազգ. վարժարանները, որոնք տարեկան 840ական սակիներու պիւտճէներովը կարգ մ'անօթի, անօգուտ ու երանելի տիրացուներ ապրեցնելու համար միայն իբր թէ հիմնուած ըլլային, առանց ազգ. դատտիրակութիւն ու բաւարար կրթութիւն մը տալու յաճախող երկսեռ աշակերտներուն:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Լորս Ոսգյորի վերջերս հրատարակեց յայտարարութիւն մը, պարտաւելով Անգլիոյ ազատական կուսակցութեան՝ Հարաւ-Սփրիկեան պատերազմին նկատմամբ չեզոքութիւնը, զոր յոյժ վտանգաւոր կը դասէ իրերու արդի կացութեան մէջ: Լորտ Բոզպէրի յայտարարեց նաև թէ՛ ա՛լ իր կամքով չ'պիտի մտնէ երբէք քաղաքական ասպարէզը:

— Մարոխի Մաճէր քաղաքին մէջ կատարուած Մեյյուսի կրօնային հանդէսներուն առթիւ երեք եւրոպացիներ, 2 Սպանիացի և 1 Անգլիացի, բնիկ ամբօխին կողմէն քարկոծուելով հալածուած են. հրաչքը հոն է որ այս երեքն ալ աշատուած են մահէ, թէև չարաչար խոչտանգուած:

— Պօհրակաև աղբիւրէ վերջերս հասած տեղեկութիւններէն կը հաւաստուի թէ՛ Պօէրները, մանաւանդ ՚ի Բրէթօրիա, աւելի մեծ գործունէութիւն ցոյց կուտան Տըլէյրի հրամանատարութեան տակ: Ճակատամարտի մը մէջ, այս զօրապետը պաշարած էր 1000 զօրքէ բազկացած անգլիական վաշտ մը: Պատգամաւոր մը կը զրկէ Անգլիացիներուն որ անձնատուր ըլլան. պատգամաւորը չ'վերագառնար. հետեւեալ օրը Տըլէյրի ուրիշ մը կը զրկէ, ա՛ն ալ չ'դառնար. երրորդ օրը, կը յարձակի Անգլիացոց վրայ, մեծկակ շարք մը կուտայ ասանց, և դերի կը բռնէ ողջ մնացողները, նաև հրամանատարը: Տըլէյրի կը հարցնէ հրամանատարին թէ՛ ի՞նչ բրած էր եր-

ցանի բռնել տուի, որովհետև չեմ ուզեր բանակցիլ ապստամբներու հետ», կը պատասխանէ Անգլիացին: Ատոր վրայ Պօէր զօրապետը բողոք մը զրկեց Լորտ Բիչնէրի, որ իր համանատարը պատերազմական Ատեանի առջև հանել տուաւ:

— Չիլեն հասած վերջին լուրերը, թէ և հակասական, դեռ նոր շունչ առնող Արեւմուտքը վրդովելու կ'սպառնան. եթէ հաստատուին այդ լուրերը, — ուրոնց համեմատ, իշխան Թուան, իբր թէ Բու Չուն զահաժառանգին հետ միացած ու բանակի մը գլուխն անցած՝ Շանսիի վրայ կը քալէ եղեր, — եւ գաղտնի ընկերութիւն մ'ալ, որ կրնայ Պօսպրներու շարունակութիւնը համարուիլ, իբր թէ հազարաւոր զինուած մարդիկ ոտք հանելով, Բաօ-Թիլնկ-Փուի մօտերը, Բէ-Չիլիի մէկ մասին տիրացեր է, և իբր թէ չինացի կանոնաւոր զօրքերն ալ, կա՛մ ապստամբներէն ջախջախուած և կա՛մ անոնց մեղսակից, այդ նահանգը պարպած ու դէպ ՚ի Բէրին նահանջած ըլլան. այն ատեն պէտք է որ կուս Վալտերգէ ետ դառնայ կէս ճամբէն, Բէրինի զեպանական մարմիններն ալ նորէն անցած տարուան դողբոր բռնեն, եւն, եւն: Սակայն, մալթիները որ այս լուրերը հերքուին, առանց որոյ, նոր տալնապի մը ժամը մօտալուտ է:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— Ժանսախսի 72 դէպքեր պատահած են Յունիս 1էն մինչև Յուլիս 22. և 30 մահեր ՚ի Չակալիկ: Բովանդակ Եգիպտոսի մէջ Սպրիլ 7էն մինչև Յուլիս 22 պատահած են 93 դէպք ու 41 մահ, որոնք կը բաժնուին այսպէս.

	Դէպք	Մահ
Աղեխանդիա	12	8
Չակալիկ	72	30
Միլիոյի	5	1
Մալաուրա	1	1
Բօր Սալիս	3	1
Թուրքիոյ մէջ	10	որ կը տևէ քա-

տուէն դացողներուն վրայ, թէ և Բէ-
րայի մէջ Յուլիս 23ին 3 նոր գէպքեր
ալ պատահած են:

— Խարթումի մէջ յունական եկեղե-
ցիի մ'առաջին քարոզ գրուեցաւ ներկայ
14ին, 'ի ներկայութեան խուռն բազ-
մութեան մը, անգլիացի սպաններուն և
Խարթումի յոյն բնակիչներուն:

— Դահրա Մուհա մէջ ոճրագործը
ներկայ 6ին կախուեցաւ 'ի Խարթում:

— Կիզէ պիտի փոխադրուին այսու-
հետեւ պատանի բանտարկեալները:

— Պիտանիս այս տարուան առաջին
վեցամսեայ մուտքն է, (Յունվար 1էն
մինչև Յունիս 30) 5,226,123 Եգտ.
սակի, իսկ ելքն է 5,122,939 Եգտ.
սակի:

— Ստրին Եգիպտոսի մէջ արդէն
շինուած նեղ երկաթուղիներու երկայ-
նութիւնն է 781 քիլոմէտր:

— Վիգորիա նոր քաղաքին նկատ-
մամբ նախընթաց թիւով մեր գրած
տեղեկութիւններուն մէջ, սխալմամբ 2
սակի շաբաթավճար ըսուած է փոխա-
նակ ամսավճարի: Արդ, նոր հիմնուելիք
քաղաքին տեղին, դիրքին և ուրիշ ման-
րամասնութեանց վրայ կը խոստանանք
գրել յաջորդով:

— Դահիրէէն Պ. Դանիէլ Հացագոր-
ծեան զրկած է խմբագրութեանն նա-
մակ մը, զոր պիտի հրատարակենք յա-
ջորդ թիւով:

ԱԶԴԵՐ

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երևելի հայ տուններուն
ծանօթ յաճախորդ, կը սլատրաստէ
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը
կատարուին:


Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԴԻՈՅՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՈՂԲՈՑԵԱԼ ԴՐԱԴԷՏ ԵՂԻՍՉՈՐ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ



Ա. Ղ. Պատմութեան մէկ կարեւոր
կէտը լուսարանող խիստ շահեկան պա-
րունակութեամբ սոյն գիրքը. 199 8^o
էջերով ոչ լոյս տեսած է Հայկական
«Արաքս» Տպարանէն կը ծախուի թրդ-
թատարի ծախքով 2 1/2 ֆր. ի:

Գնել փափագողք կրնան դիմել
հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne L'«Arax»


ALEXANDRIE

EGYPTE

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ


ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ա-
մեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու
պատրաստ, կը վաճառէ. ապրանք-
ները մաքուր, տոկուն ու ձեւուր. կը
մրցի բոլոր օտար վաճառատանց հետ,
գիններուն աժանութեան կողմէն:



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեծ Սրճարանին ետին



Յաճախորդները պիտի գտնեն զով
ու օգուտէս տեղ մը, մաքուր սպասար-
կութիւն, համեղ ու պէս պէս կերա-
կուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմ-
պելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի կանխիկ վճարումով ու գոհացու-
ցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի
տեսնէք նոր ճաշարանին առաւելու-
թիւնը: